

« ոսկ պարագային՝ պէտք է որ տուժենք մեր ստացուածքը :  
 « Գրուած է ի Մազրիդ , երկրորդ օրն Հոկտեմբերի , ի թուին  
 « հազար չորսհարիւր քսանմէկ :  
 « Հրաւիրուած վկաներ որոնք ներկայ էին . — Ստեփան Ֆէրրան-  
 « ղէզ , Ալֆոնսո Սանչէզ , Ֆրանսէսկո Ֆէրրանդէզ եւ Պետրոս Գոն-  
 « զալէզ , նօտարք Մազրիդի :  
 « Եւ ես՝ նիկողոս Գարսիա , նօտար մեր վեհափառ թագաւո-  
 « րին , յիշեալ վկաներու հետ ներկայ գտնուեցայ , այս թուղթը գրեցի  
 « եւ վաւերացնելու համար այստեղ իմ ստորագրութիւնս գրի : »

Այս փոխանորդագրիս զօրութեամբ յիշեալ Ապարիսիո Սանչէզ ու Դիէգո Ֆէրրանդէզ՝ Մազրիդի Քաղաքային Վարչութեան անունով իրենց տա-  
 նուտէր (sennor) կը ճանչնան յիշեալ տէր Լեւոն թագաւորը , եւ անոր  
 հնազանդելով՝ իր գրութիւններն ու հրամանները կը կատարեն . վասն  
 զի մեր վեհափառ թագաւորը տէր Յովհաննէս՝ Մազրիդ քաղաքն իր  
 արուարձաններով , իր եկամուտներով , իր իրաւունքներով եւ իր ար-  
 քայական իշխանութիւնով (sennorio Real) ընծայած է յիշեալ տէր  
 Լեւոնի՝ Հայոց թագաւորին՝ մինչեւ իր կեանքին վերջը , եւ [տէր Յով-  
 հաննէս] իր անունով ստորագրուած ու իր կապարեայ կնիքով կնքուած  
 եւ իր ուրբուն շնորհաթղթով՝ վերոյիշեալ քաղաքին Վարչութեան ու  
 նոյն քաղաքին եւ բոլոր արուարձաններու բնակիչներուն ա՛յսպէս ալ  
 կը պատուիրէ : Ասկէ զատ՝ Ապարիսիո Սանչէզ եւ Դիէգո Ֆէրրանդէզ  
 յիշեալ Վարչութեան անունով յայտարարեցին , որ տէր Յովհաննէս  
 վեհափառ թագաւորին կողմէ շնորհաթղթով եղած պատուէրին համա-  
 ձայն՝ տէր Լեւոնը կընդունին եւ ընդունեցին իրրիւ տանուտէր Մազ-  
 րիդ քաղաքին ու արուարձաններուն : Եւ տէր Լեւոն թագաւորին ներ-  
 կայութեան՝ հպատակութիւն ուխտեցին ու հաւատարմութիւն յայտնե-  
 ցին , ինչպէս կընէին եւ պարտաւոր են ընել իրենց վեհապետին . նոյն-  
 պէս եւ պարտաւոր են մէկ կամ երկու կամ երեք անգամ հիւրընկալել  
 Մազրիդ քաղաքին մէջ , ամէն անգամ որ հոն այցելէ ան՝ թէ՛ գիշեր  
 եւ թէ՛ ցորեկ ժամանակ , քիչ կամ շատ հետեւորդներով , պատերազմի  
 եւ կամ խաղաղութեան ժամանակ , յիշեալ տէր Յովհաննէս թագաւո-  
 րին բարեկամութեան՝ եւ կամ սիրուն համար . պարտաւոր են նաեւ  
 հնազանդիլ իր գրութիւններուն եւ հրահանգներուն՝ իբր իրենց վեհա-  
 պետին , ինչպէս որ պարտաւոր պիտի ըլլային ընել եթէ գտնուէին յիշ-  
 եալ տէր Յովհաննէս վեհափառ թագաւորին եւ կամ իր զաւակին՝ առա-  
 ջին գահաժառանգ արքայազուն տէր Ենրիկի իշխանութեան տակ : Իսկ